ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ *յանուն Տ. Կորիւն վարդապետի, որով պատուիրեցաւ գնալ ի Նոր Աղթիկ գիւղն և օծել զնորակառոյց աղօթատուն տեղւոյն։* Թ. 225.

— *Յանուն Տ. Արսէն վարդապետի Վեհունւոյ, որով հաստատեցաւ հովիւ հայոց Սուչավայի։* Թ. 264.

— *Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, ընդ որում յըղեցաւ պատճէն գրութեան Ամեն. Պատրիարքի հայոց Թուրքիոյ և պատուիրեցաւ տալ բացատրութիւն վասն կարգադրութեան, վերաբերելոյն վկայականի առողջութեան ցանկացողաց մտանելոյ յամուսնութեան։* Թ. 266.

— *Յանուն նոյն Սինոդի, որով յայտնեցաւ բարձրագոյն հաստատութիւն Տ. Աշոտ վարդապետի յԱռաջնորդ թեմին Արցախայ, պատուիրելով տնօրինել զարժանն։* Թ. 285.

— *Յանուն Տ. Մխիթար, Յուսիկ և Մատթէոս վարդապետաց, որով պատուիրեցաւ քննել զհաշիւս տպարանի, Ճեմարանի և Վանական Կառավարութեան Մ. Աթոռոյ։* Թ. 293.

— *Յանուն Տ. Համազասպ վարդապետի, որով կարգեցաւ անդամ վանական Կառավարութեան Մ. Աթոռոյ, իսկ Բարգէն վարդապետն ազատ համարեցաւ ի նոյն պաշտամանէ։* Թ. 226.

— *Յանուն վիճ. Կոնսիստ. Վրաստանի և Իմերէթի, որով լուծեցաւ պսակ տաճկահպատակ Եղոյի Պօղոսեան*

Ամրեանց ընդ կնոջն Սանամայ Ասոյեան, արտոնելով առաջնոյն մտանել ի պսակ յետ եռամեայ և կնոջն վեց ամսեայ ապաշխարանաց։ Թ. 305.

Կոնդակ յանուն խորհրդարանին Դավրիժոյ, որով պատուիրեցաւ կոչել յԱտեան զԱնդրին Յարութիւնեան և առաջարկել յետս տալ տիկին Խոնարհի զ60 թուման և զմնացեալ իրեղէնս մօր նորա։ Թ. 313.

— Ընդհանրական յանուն հայ ժողովրդեան թեմին Ատրպատականի վասն հաստատութեան Տ. Բարդուղիմէոս Եպիսկոպոսի Գէորգեան յԱռաջնորդ թեմին։ Թ. 325.

Բ.

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհունակութիւնք.

Կոնդակ յանուն Պ. Լևոնի Յակոբեան յԱղէքսանդրիա, վասն նուիրաբերեալ 750 ֆրանք գումարին յօգուտ Մ. Աթոռոյ։ Թ. 221.

— Յանուն պ. Գէորգայ Սրապեան Ն. Նախիջևանցւոյ, վերաբնակելոյն յՕրեօլ քաղաքի, վասն հիւրասիրութեան աքսորեալ հայ հոգևորականաց և առհասարակ օտարական հայոց։ Թ. 233.

— Յանուն պ. Դաւթի Համբարձումեան Ռոստոմեան նուիրեցւոյ, վասն զարդարելոյ ի ներքուստ զՍուրբ Մինաս եկեղեցին հայոց քաղաքին այլ և այլ զարդիւք։ Թ. 258.

— Յանուն Արսէն ա. քահանայի Բագրատունւոյ Տփխիս քաղաքի առթիւ կատարման երեսնամեայ գրական և ուսուցչական յոբելինի։ Թ. 302.

Գ.

Հայրապետական պարգևք.

Կոնդակ լանչախաչից յանուն՝ Գրիգոր քահանայի Իւղբաշեան Ղզլարոյ, Ղևոնդ քահանայի Պետրոսեան

Ալէքսանդրապոլու, Մկրտիչ Սամուրլի գեղջ Բորչալուայ, Կարապետ քահանայի Առաքելեան Ալէքսանդրապոլի, Գրիգոր Տ. Մինասեան, գործակալի Ղափան Բարկուշատի, Խաչատուր քահանայի Տ. Գրիգորեան Երևանցոյ, թ. թ. 270, 272, 273, 275, 277, 288 և կամիլաւկայ գլխաւոր կայ յանուն Արսէն քահանայի Վարդանեան Եկատերինոդարի, Արսէն քահանայի Մկրտչեան գործակալին Օրթաքիլիսայի, Խաչատուր քահանայի Տ. Գէորգեան գործակալի Մեծ Քեափանակի, Աստուածատուր քահանայի Փէշիշքեանդ գեղջ, Զաքարիա քահանայի Տ. Շմաւոնեան նախկին գործակալին Դառնուոյ. թ. թ. 271, 274, 276, 309, 310։

— Ցանուն Գրիգոր քահանայի Տ. Գրիգորեան եկեղեցւոյ հայոց Ս. Պետերբուրգի, որով չնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան թ. 279.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մարտի 28-ին Սինոդը լուծեց Թիֆլիսի բնակիչ Սարգիս Մայիլեանի և Նունէ Եագորեանի ամուսնութիւնը և իրաւունք տուաւ Սարգսին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լուծեց Բաքուի բնակիչ Մովսէս բէկ Եաղուբբէկեանի և Վառվառէի ամուսնութիւնը և թոյլատրեց Մովսէս բէկին նորէն ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի գտաւ Աղէքսանդրապոլի դաւառի Սպիտակ գիւղի բնակիչ Յովհաննէս Տէր-Յարութիւնեանցին և որոշեց դիմել Երևանի պ. Նահանգապետին օրինական համաձայնութեան համար։

Ապրիլի 1-ին Սինոդը ստանալով օրինական թոյլտուութիւն, որոշեց վերադարձնել Վրաստանի և Իմերեթի Կոնսիստորիային Զաք և Լոմատուրց գիւղերի կառուցանելու եկեղեցիների յատակագծերի պատճէնները և հրա-